ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. N--Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Կիևյան փողոցի հ.8/4 շենքի հ.29՝ 13.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.09.2011թ. հ.2719088 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սվետլանա Քաչարյանին, Լիլիյա Աղաբեկյանին և Սոնա Աղաբեկյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարան է դիմել Սվետլանա Քաչարյանը Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Կիևյան փողոցի 8/4 շենքի հ.29՝ 13.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.09.2011թ. հ.2719088 վկայական) իր ընտանիքին անհատույց մասնավորեցնելու (օտարելու) խնդրանքով:

Կիևյան փողոցի 8/4 շենքի հ.29՝ 13.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (նախկին՝ Կիևյան փողոցի հ.8 հանրակացարանային շենքի հ.29 սենյակը) ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության 27.10.2005թ-ի հ.166 ուղեգրով տրամադրվել է Մխիթար Քաչարյանին՝ Սվետլանա Քաչարյանի որդուն:

Նշված բնակարանի անմիջապես հարևանությամբ է գտնվում Սվետլանա Քաչարյանին սեփականության իրավունքով պատկանող Կիևյան փողոցի 8ա շենքի հ.30՝ 29.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.01.2008թ. հ.2246333 վկայական), որտեղ վերջինիս հետ միասին հաշվառված բնակվում են աղջիկը՝ Լիլիյա Աղաբեկյանը և թոռնուհին: Մխիթար Քաչարյանը և մայրը՝ Սվետալա Քաչարյանը միացրել են իրենց պատկանող սենյակները, կառուցել կոմունալ հարմարություններ և օգտագործել որպես մեկ միասնական բնակարան:

Մխիթար Քաչարյանը 01.10.2008թ.-ին մահացել է, սակայն նրան տրամադրված սենյակը մինչ օրս օգտագործվում է Սվետլանա Քաչարյանի ընտանիքի կողմից, որպես մեկ միասնական բնակարան: Սվետլանա Քաչարյանը դիմել է Երևանի քաղաքապետին վերը նշված հասցեում գտնվող բնակարանը Երևանի քաղաքապետի որոշմամբ իր ընտանիքին օտարելու խնդրանքով, սակայն ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության՝ Կիևյան փողոցի 8/4 շենքի հ.29՝ 13.8քմ ընդհանուր մակերեսով բնակարանը Մխիթար Քաչարյանին 27.10.2005թ-ի հ.166 ուղեգրով տրամադրված լինելու հանգամանքը բավարար չէ հարցը Երևան քաղաքի ավագանու 23.12.2009թ. հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետի շրջանակում կարգավորելու համար:

Քաղաքացի Սվետլանա Քաչարյանի անվամբ մասնավորեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ընդունել Երևան քաղաքի ավագանու որոշում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը կարող է մասնավորեցվել Երևան քաղաքի ավագանու թույլտվությամբ։

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշման նախագիծ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ